


ՄԱՔՐԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՃԱՐ՝ ՄԵՐ ԱՆՁԵՐԸ

Կ'աղաչեմ, չմնամ ինչպես որ եմ, այլ՝ ըլլամ այնպես ինչպես եղանք Աստուծոյ որդեգրութեամբ: Արդ, ինչպէ՞ս ներում պիտի գտնեմ, ի՞նչ պատասխան պիտի տամ, ո՞ր խաւարը մեզ պիտի չծածկէ, որովհետեւ անոնք, որ կուտեմք եւ օրէնքի դատապարտութենէն ազատելով աստուածային ողջոյնին եւ երկնաւոր խաղաղութեան արժանի եղան, հապա մենք, որ երկնային շնորհքը այսինքն՝ վայելած ու աստուածային պարգեւը ճաշակած եւ ծննդեան առաջին օրէն իսկ հրաւիրուած եմք Տիրոջ այգիին վայելելու, ամբողջ յոգնութիւնն ու սաստիկ տօթքը կրելէ ետք յետիններէն աւելի՞ յետին պիտի գտնուինք (Տե՛ս Մատթ. 20. 1-15):

Կը խնդրեմ, սիրելիներ, անմիտ չըլլանք, այլ՝ թօթափեմք մեր կեանքի ծուլութիւնը եւ նորոգեմք մեր սիրտերը Քրիստոսով: Ապաշխարեմք՝ մեր գործած մեղքերը խոստովանելու եւ զգուշանամք գալիքներէն, որպէսզի չըլլայ մեր փոխածին դատանք: Մեր մեղքերու տիղմը արտասուելով լուանք, մեր անձերը սրբեմք, ձեռներէն աւելի սպիտակացնեմք եւ բուրդէն աւելի մաքրեմք եւ այս տարագով Աստուծոյ մարդասիրութիւնը մեր վրայ հրաւիրեմք, որպէսզի խոստացած բարիքներուն արժանի ըլլանք մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի շնորհով եւ մարդասիրութեամբ, որով եւ որուն հետ Հօր եւ Հոգւոյն փառք, իշխանութիւն եւ պատիւ վայել է, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Սարգիս Շնորհալի (Յորդորակներ)

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ




ՊԼՏՐՈՒՄ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՏՈՒՄ 2.- Պատրաստութիւն ընծաներուն Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Կը խնդրէ Տիրոջմէ, որպէսզի աստուածային ողորմութեան մէջ անշարժ եւ հաստատուն պահէ ընդհանրական եւ Առաքելական Եկեղեցին, որ ականատեսուած է Աստուծոյ ժողովոյն Սուրբ Խաչով եւ փրկուած իր Միածին Որդւոյն պատուական Արիւնով:

Կ'ոգեկոչէ բոլոր ուղղափառ եկեղեցիները, որոնք ուղիղ վարդապետութեամբ կը մեկնաբանեն եւ կը սորվեցնեն Աստուծոյ ճշմարիտ խօսքը:

Վերոյիշեալ խնդրանքներէն ետք, պատարագիչ քահանան իր աղերսանքը Աստուծոյ ուղղելով՝ յիշատակութիւնը կը կատարէ հայոց հայրապետին եւ թեմակալ առաջնորդին եւ անոնց երկար կեանք մաղթելով կ'ըսէ. ... Ծարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 24 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2024 ԹԻՒ 47

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՍ. 36.1-9: Ա. ԹՍ. 1.1-10: ՂԿ. 12.13-31

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՏԱՐԱՄԸ ԸՍՏ ՂՈՒՎԱՍԻ 12.13-31

Ժողովուրդէն մէկը Յիսուսի ըսաւ. «Վարդապէ՛տ, ըսէ՛ եղբօրս, որ մեր հօր ձգած ժառանգէն իմ բաժինս տայ ինծի»: Յիսուս պատասխանեց. «Ո՛վ մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ իրաւունքի բաժանարար կարգեց ձեր վրայ»: Ապա դառնալով ժողովուրդին, շարունակեց. «Նայեցէ՛ք եւ զգուշացէ՛ք ազահութեան բոլոր տեսակներէն, որովհետեւ մարդու մը կեանքը կախեալ չէ իր ամբարած հարըստութենէն»:

Յիսուս անոնց առակ մըն ալ խօսեցաւ եւ ըսաւ.- «Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին: Ան ինքնիրեն կը մտածէր ու կ'ըսէր. Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձքս ամբարելու համար շտեմարաններուն մէջ տեղ չմնաց: Այո՛, գիտեմ ինչ պիտի ընեմ: Պիտի քակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակները պիտի շինեմ եւ հոն ամբարեմ ցորենս եւ ամբողջ բերքերս: Ապա ես ինծի պիտի ըսեմ.- Ո՛վ մարդ, քանի որ երկար տարիներու համար ամբարած հարստութիւն ունիս, հանգիստ ըրէ՛. կե՛ր, խմէ՛ եւ ուրախացի՛ր»: Բայց Աստուած ըսաւ իրեն. «Անմի՛տ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ քեզմէ պիտի առնեն. որո՞նք պիտի մնայ պատրաստածդ»: Եւ Յիսուս եզրակացուց. «Նոյնն է պարագան բոլոր անոնց, որոնք միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիզեն, փոխանակ Աստուծոյ աչքին հարստանալու»:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Մի՛ մտահոգուիք ձեր ապրուստին համար, թէ ինչ պիտի ուտէք եւ ոչ ալ ձեր մարմիններուն համար, թէ ինչ պիտի հագնիք: Որովհետեւ կեանքը աւելի կարեւոր է քան ուտելիքը եւ մարմինը աւելի կարեւոր՝ քան հագուստը: Դիտեցէ՛ք ագռաւները, որոնք ո՛չ կը սերմանեն, ո՛չ կը հնձնեն, ո՛չ շտեմարաններ ունին եւ ո՛չ ամբարներ, սակայն Աստուած կը կերակրէ զանոնք: Աստուած պիտի չկերակրէ՞ ձեզ, դուք՝ որ Աստուծոյ աչքին թռչուններէն գերազանց էք: Մտահոգուիլը, որեւէ ձեռով ձեր կեանքը կ'երկարէ՞: Եթէ նուազագոյն բանը չէք կրնար ընել, ինչո՞ւ ուրեմն ուրիշ բաներով կը մտահոգուիք: Դիտեցէ՛ք եւ տեսէ՛ք, թէ ինչպէս կ'աճի դաշտի շուշանը: Ո՛չ կը հիւսէ եւ ո՛չ ալ հագուստ կը կարէ: Հաւատացէ՛ք, որ նոյնիսկ Մոդոնոն իր ամբողջ փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս գեղեցիկ չկրցաւ հագնիլ: Եթէ Աստուած այդպէս աղուոր կը հագցնէ խոտը, որ այսօր դաշտին մէջ է եւ վաղը կրակը պիտի նետուի, ձեզ աւելի լաւ պիտի չհագցնէ՞, թերահաւատներ:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՍԳԱՆՉԵԼԱԳՈՐԾ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ԵՒ ՄԻՒՍ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Գրիգոր Սֆանջելագործ Հայրապետ ծնած է Նեոկեսարիա անունով ֆաղափի մը ազնուական ընտանիքի երգիլիին տակ՝ 213 թուականին, ուր մաես կը ստանայ իր ուսումը եւ կը պատրաստուի մասնագիտանալ օրէնագիտութեան եւ հոնտորութեան մէջ:

Այդ միջոցին Գրիգորի բնոյայրը կը նշանակուի Պաղեստինի կուսակալ: Ուստի, Գրիգոր եւ իր եղբայրը կ'ընկերանան իրեն եւ կը փոխադրուին Կեսարիա, որ այն ժամանակ վարչական կեդրոնն էր Պաղեստինի: Այնտեղ երկու եղբայրները կը հանդիպին այդ օրերու եկեղեցւոյ նշանաւոր հայրերէն՝ Ռոզգինէսին, եւ այնքան կը տպաւորուին անոր ուսուցումներէն, որ 6-7 տարիներ կ'աշակերտեն անոր եւ կը սորվին հոնտորութիւն եւ ի վերջոյ ֆրիստոնեայ կը մկրտուին:

Գրիգոր՝ ուսումը աւարտած Ռոզգինէսի հմուտ ուսուցումներու շունչին տակ, կը վերադառնայ իր ծննդավայրը, ուր ժամանակ մը կ'աշակերտէ Կապադովկեան Կեսարիոյ Փիրմիլիանոս անունով եպիսկոպոսին, որմէ կը սորվի ֆրիստոնեական վարդապետութիւնը եւ եկեղեցւոյ կարգն ու կանոնը: Ապա եպիսկոպոս կը ձեռնադրուի Նեոկեսարիոյ ֆաղափին համար, ուր աւանդութիւնը կ'ըսէ, թէ 17 ֆրիստոնեաներ միայն կային իր ձեռնադրութեան ժամանակ եւ իր վախճանման ժամանակ մնացած էին միայն 17 հեթանոսներ...:

Գրիգոր իր կատարած հրաշագործութիւններուն համար կը կոչուի Սֆանջելագործ Հայրապետ: Կը վախճանի 270 թուականին, իր ետին ձգելով բազմաթիւ աշխատութիւններ, որոնց մէջ մաես ֆրիստոնեական ուսուցումներ, որոնք կ'օգնեն նորադարձ ֆրիստոնեաներուն ամրապնդելու իրենց հաւատքը եւ ապրելու ֆրիստոնեական կեանք մը:

### Նիկողայոս Սֆանջելագործ եւ միւս Նիկողայոս Հայրապետ

Եկեղեցական տօնացոյցը կը յիշատակէ երկու Նիկողայոս հայրապետներ, որոնք սակայն ըստ սուրբերու վարձագիրներուն եղած են միեւնոյն անձը, միեւնոյն կենսագրութեամբ:

Ըստ վարձագիրներու, Նիկողայոս հայրապետ եղած է Փոֆր Ասիոյ Լիկիա կոչուած գաւառի մեծահարուստ ընտանիքի մը գաւառը: Ան փոֆր տարիքէն որք մնալով, կը մեծնայ Նիկողայոս Երեց անունով ծանօթ, իր եպիսկոպոս մօրեղբօրը ինքնամփին տակ:

Ան տպաւորուելով Քրիստոսի կողմէ մեծահարուստ երիտասարդին ուղղուած կոչէն, թէ՛ «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր, այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ հետեւէ՛ ինձի» (Մտք. 19.21), կը ծախէ իր հօրեմական ժառանգութիւնը եւ կը բաժնէ աղքատներուն: Եպիսկոպոս կը ձեռնադրուի Միւնոյ ֆաղափին եւ իր ոյժերը ի սպաս կը դնէ աղքատներուն եւ կարօտեալներուն օգնութեան:

Նիկողայոս հայրապետ այնքան կը խորանայ իր հաւատքին մէջ, որ Աստուծմէ կը պարգեւատրուի հրաշագործութեան շնորհով: Կը պատմուի, թէ ան նոյնիսկ մաւրկոնութեան մը ընթացքին, աղօթքով կը դադրեցնէ ծովային փոթորիկ մը եւ խաղաղեցնելով ծովը կը փրկէ մահու մամբորդները, որով կը դառնայ մաւստիներուն պաշտպան Սուրբը: Նիկողայոս, մաես եղած է կերպարը հանրածանօթ Կաղանդ Պապային՝ Սանթա Գրոգին (որ աղաւաղուած ձեւն է St. Nicholas-ի), որով մաես կը նկատուի մանուկներուն հանդէպ սեր ու գուրգուրանք ունեցող Սուրբը:

Նիկողայոս Սֆանջելագործ հայրապետ Լիկիանոս կայսեր հալածանքներու ընթացքին ժամանակ մը կ'աֆորուի աթոռէն եւ ապա դարձեալ կը վերադառնայ: Ան ներկայ կ'ըլլայ Նիկիոյ մէջ 325-ին գումարուած Եկեղեցւոյ Տիեզերական առաջին ժողովին, որմէ տարի մը ետք կը վախճանի:

## Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Տ Գ Ա Ս

### ՅԱՆՁՆԱԳՊԱՏԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿՈՒՌՑՆԷ ՄԵՉ

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան, թէ ինչ ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց.- Հաստատ գիտցէք, թէ ես եմ ոչխարներուն դուռը (Յհ.10.6-7): «Խօսեցաւ անոնց», այսինքն՝ Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն մասնաւորաբար եւ հասարակ ժողովուրդին ընդհանրապէս: «Սակայն անոնք չհասկցան»: Այո, չհասկցան, որովհետեւ կոյր էին հոգիով: Մեղքը կուրցուցած էր զիրենք: Յանձնապաստանութեան ոգին խաւրեցուցած էր իրենց ներքին տեսողութիւնը: Անոնք իրենք զիրենք արդար կը կարծէին եւ միակ արժանիները՝ երկինքի արքայութիւնը ժառանգելու: Ուստի, չկրցան Քրիստոսի անձին մէջ արքաներուն Արքային ներկայութիւնը տեսնել, աստուածային խոստումներուն իրականացումը տեսնել:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼ Ի Ք Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Զգոյշ ըլլանք յանձնապաստան ըլլալէ, այսինքն՝ մեր անձերուն հանդէպ կոյր վստահութիւն ունենալէ: Ատիկա կրնայ պատճառ դառնալ, որ չտեսնենք ճշմարտութիւնը Յիսուսի անձին մէջ:

Ապրիլ Աստուծոյ շնորհքով եւ երկիրով. միշտ փառք տալով:

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

### ԵՐԲ ԱՍՈՒԾՄԷ ՕԳՆՈՒԹԻՒՆ Կ՛ՈՒԶԵՍ, ԿԱՐԳՎ՝ ՍԱԳՄՈՍ 70

Ո՛վ Աստուած պիս ապատէ՛. փութա՛, ո՛վ Տէր, օգնէ՛ ինձի: Թող ամօթով մնան ու շփոթի մատնուին անոնք՝ որ իմ մահս կ'ուպեն: Թող խակտառակուին ու ետ քաշուին անոնք՝ որ ինձի չարիք կը կամենան: Ամօթահար թող ետ դառնան անոնք՝ որ պիս կը հեզնէին: Թող հրճուին եւ ուրախանան բոլոր անոնք՝ որ քեզ կը պաշտեն: Փրկութեանդ ցանկացողները թող միշտ ըսեն.- «Մե՛ծ է Աստուածս»: Գալով ինձի, ես աղքատ եմ եւ չբաւոր, փութա՛, ո՛վ Աստուած, հասի՛ր ինձի. օգնականս եւ ապատիչս դո՛ւն ես, Տէ՛ր, մի՛ ուշանար:

### ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԸ

«Մենք պէտք է միշտ Աւետարանի իրատու դաստիարակչիմք՝ լուսաւորուելու համար, որպէսզի ձեռք ձգենք Կտակարաններուն մէջ ամփոփուած ճշմարտութեան Սուրբ Հոգիի շնորհներէն: Ուստի դադրիմք դատարկ ու վայրապար ֆննութենէ եւ ընթանանք Սուրբ Գիրքի՝ Հին եւ Նոր Կտակարաններուն իրատներով: Սուրբ Գիրքերը մեր վարդապետներն են: Անոնց միջոցաւ ընդունիմք յաւիտեանական յոյսը եւ անոնցմով բարձրանանք աշխարհէն վեր»: